Պ-675[9]-09.10.2023-ՊԱ-011

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատախազության մասին» 2017 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-198-Ն օրենքի 70-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասի «ծառայողական հաշվեցուցակային» բառերը հանել:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Պ-675[9]-09.10.2023-ՊԱ-011/0

Երկրորդ ընթերցում

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատախազության մասին» 2017 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-198-Ն օրենքի 70-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասի «ծառայողական հաշվեցուցակային» բառերը հանել:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՁԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» (Պ-675-09.10.2023-ՊԱ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	**Առաջարկ (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Ձենքի շրջանառության կարգավորման մասին» Պ-675-09.10.2023-ՊԱ-011/0 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
2.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «թմբուկը:» բառից հետո լրացնել «հարվածային մեխանիզմը» բառերը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
3.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «կամ 140 մմ-ից ոչ ավելի երկարություն ունեցող ակոսավոր փող» բառերը փոխարինել «այդ թվում՝ 140 մմ-ից ոչ ավելի երկարության ակոսավոր մասով» բառերով:		
4.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում «և» շաղկապն առաջրկվում է փոխարինել «, որոնք» բառով:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**

5.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետում «մասեր» բառից առաջ լրացնել «հիմնական բաղկացուցիչ» բառերը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
6.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետում «կամ այլ նշանակետ» բառերը փոխարինել «նշանակետը» բառով44-րդ կետում «գնահատման մարմնի տված փաստաթուղթ» բառերը փոխարինել «գնահատման մարմնի կողմից տրված համապատասխանության գնահատման փաստաթուղթ (համապատասխանության սերտիֆիկատ)» բառերով:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
7.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	8-րդ կետում «նետողական զենք» բառերից հետո առաջարկվում է լրացնել «(աղեղներ՝ 27 կգ/ուժ-ից բարձր ձգողության ուժ ունեցող և արբալետներ՝ 43 կգ/ուժ-ից բարձր ձգողության ուժ ունեցող)» բառերը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
8.	**Կառավարություն**	«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին **Պ-675[6]-09.10.2023-ՊԱ-011/0** Նախագիծն առաջարկվում է հանել փաթեթից՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2023 թվականի նոյեմբերի 22-ին «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքի ընդունման կապակցությամբ ընդունվել է նաև «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-370-Ն օրենքը (ուժի մեջ է մտնելու 2024 թվականի հունվարի 1-ից), ինչի շրջանակներում «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետն ուժը կորցրած է ճանաչվել, իսկ 23-րդ հոդվածն ամբողջությամբ շարադրվել է նոր խմբագրությամբ:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**

9.	**Կառավարություն**	Նախագծի 1-ին հոդվածով խմբագրվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանվում է «ռազմական նշանակության արտադրանքի» հասկացությունը, ինչպես նաև նախագծով նախատեսվում են ռազմական նշանակության արտադրանքին վերաբերող մի շարք կարգավորումներ: Հարկ է նշել, որ ռազմական նշանակության արտադրանքին վերաբերող կարգավորումները դուրս են Օրենքի կարգավորման շրջանակներից: Ուստի առաջարկվում է դրանք հանել նախագծից	**Չի ընդունվել**	**Չի ընդունվել**
10.	**Կառավարություն**	Նախագծի շրջանակներում առաջարկվում է քննարկել Օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ մասում զենքով պարգևատրված անձանց մոտ զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների առկայության դեպքում որպես պարգև տրված զենքը մալելու և նշված անձանց վերադարձնելու մասին կարգավորումներ նախատեսելու հնարավորությունը՝ նշված կարգավորումներն ուժը կորցրած ճանաչելու փոխարեն:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
11.	**Կառավարություն**	նախագծերի փաթեթից հանել ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում նախատեսող **Պ-675[17]-09.10.2023,04.12.2023-ՊԱ-011/1** նախագիծը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**